

# ԾՆՆԴԵԱՆ ԳԻՇԵՐ

... Ու կը ծիւնէր, կը ծիւնէր
Խոլ ձեշտանքով և սարսուռով անաւոր
Սեւ ու տխուր այն գիշեր։

Չազար դարով էր ծիւներ,
Ու կուտակուած թշուառութեամբ վիրաւոր
Մարդն եղկելի կը ձնծէր.

Մարդն եղկելի կը ձնծէր...
Ո՜հ, ի՜նչ ողորմ, ի՜նչ աղեխարշ արտասուք...
Երկինքն անգամ էր յուզուեր.

Երկինքն անգամ էր յուզուեր,
Ու սիրտ կ'ուզէր, արցունք կ'ուզէր սրտմաշուք
Լալ ձեք մարդուն բախտն աւեր։

«Երթամ տեսնեմ սրտիս սէր,
Զոր մատներովս կազմեցի այնքան սիրուն,
Ու շունչս ամբիծ իր շունչն էր»։

Բանին պատգամն հնչեր էր։ —
Խուժեցին դուրս բիւր բանակներ զուարթուն,
Ու երկինքն էր փեռեկեր։

Ու կը ծիւնէր, կը ծիւնէր
Գիշերն ի լոյս երկինքն այն լոյս հրեշտակներ.
Նոր երգ մ'ոլորտն էր բռներ։

Կ'ընկրկէին հոն դարեր
Անշարժ... ու լուռ... խօսուն, անխօս կը ժպտէր,
Երկինք զԱստուած էր ծիւներ։

Ու այն Աստուած մանուկ էր,
Կարօտ ունէր, արցունք ունէր, սէր ունէր,
Ու այն սիրով կը մեռնէր...

Ալ չէր ծիւներ այն գիշեր.
Աւետի՜ս... երկիրս երկինք էր դարձեր.
Մարդն երջանիկ՝ կ'արտասուէր...։

Հ. ԵՂԻԱ ՓԷՉԻԿԵԱՆ

# ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՄՈՒՐԱՏԲԷԳԵԱՆ

## ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մեր հանդէսին վերջին պրակը մամուլէն դուրս գալու վրայ էր, երբ Հայաստանի սրտէն կը սփռուէր ի սփիւռս աշխարհի հայութեան թէ Խորէն Արքեպս. Մուրատբէգեան կաթողիկոս ընտրուած էր Էջմիածնի մէջ տարւոյս Նոյեմբեր 12ին։ Փութացինք դուրս քաշել զայն՝ տեղ տալու համար գոնէ վերջին էջերուն մէջ՝ օրուան մեծ եղելութեան, որ ուրախառիթ է և գրեթէ զարմանալի՝ մեծամասնութեան մը համար որ այնքան լաւատես չէր այդ մասին։

Մենք՝ ինչպէս երբեմն հասարակաց սուգ՝ զուժեցինք Գէորգ Եի մահը, այսօր ալ մեր ուրախակցութեան անկեղծ բաժինը կ'արձանագրենք, մանաւանդ՝ շեշտելով միաձայն բարենշան գոհունակութիւնը որ տեսնուեցաւ հայ մամուլին մէջ, ինչպէս և հայ ժողովրդեան կրօնական ջերմ վերաբերումը և հետաքրքրութիւնը՝ ժամանակի մը մէջ որ տնտեսական ու հոգեկան այնքան տառապանքներ կը ճնշեն։

Ո՛չ ոք կ'ուրանայ թէ այդ ընտրութեան մէջ ամենամեծ դեր մ'ունի Հայկական Հանրապետութիւնը իր բարեացակամութեամբ և գործնական աջակցութեամբ որ անհրաժեշտ էր այդ գործին համար։

Ներգաղթի հրապուրիչ էջերուն քով այս ալ իր պատմական կարեւորութիւնն ունի, և նոր հորիզոն մը կը բանայ հայութեան՝ լաւագոյն յոյսեր արծարծելով անոր սրտին մէջ։

Ի վիճակի չըլլալով ընդարձակ տեղեկութիւններ տալ կաթողիկոսական ընտրութեան և Եկեղեցական Համագումարին շուրջ, հոս կ'ամփոփենք համառօտ կենսագրականը Նորընտիր Կաթողիկոսին։

Ան ծնած է Թիֆլիս, 1873ին. իր ուսումնական կրթութիւնն առած է նախ իր ծննդավայրի Ներսէսեան վարժարանը, ապա շրջանաւարտ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանէն, ուսկից վերջ Մոսկուայի մէջ կը բոլորէ իր համալսարանական ընթացքը։

1910ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Իզմիրլեան Կաթողիկոսէն. 1923ին հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսի կ'աջակցի տեղապահութեամբ, անոր հիւանդութեան շրջանին. հուսկ այդ պաշտօնին կը նշանակուի 1925ին՝ կաթողիկոսական կարգադրութեամբ, և խկապէս զայն կը վարէր 1930 Մայիս 8էն ի վեր՝ իր նախորդի մահուան թուականէն։ Գերագոյն Խորհուրդի գործակից ու վարիչ ըլլալէն զատ, ան վարած է Երեւանի թեմի առաջնորդութիւնը շուրջ տասնեակ տարիներ։

Իմաստուն և զօրեղ վարիչի ձիրքեր կանուխէն ցոյց տուած է Նորընտիրը. ինք էր որ 1914ին Գէորգեան Ճեմարանին մէջ ծագած ըմբոստութիւն մը կը խաղաղէր, և 1925ին, Մելեան ու Բենիկ Վ.ի «Ազատ Եկեղեցի»ին դէմ կը մաքառէր մինչեւ անոր ի սպառ ջնջումը։ Միւս կողմէն իր աջալուրջ հսկողութեամբ թոյլ չտուաւ որ ոչ մէկ ոտնձգութիւն կատարուի Էջմիածնէն ներս, և նախանձախնդրութեամբ պահպանեց վանքին հնութիւնները, թանգարանն ու գանձարանը։

Նկատելով ուրեմն անձնական խոհեմ ու քաղաքագէտ վարմունքն և նպաստաւոր պարագաները՝ անակնկալ մը չեղաւ իր կաթողիկոս ընտրուիլը որ կատարուած էր Նոյեմբեր 12ին, և յաջորդ օրը օծումը։

Հայկական Մամուլին մէջ արդէն ակնարկներ եղան թէ հաւանօրէն որոնք պիտի

digitised by A.R.A.R.@

ըՍան գիծերը Նորընտիր Կաթողիկոսին գործունէութեան։

Սակայն ինչ որ քսան և աւելի տարիներ հրապարակ նետուած է՝ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցն է. և այդ տեսակէտով վերջին տարիներս ամէն թերթ, ամէն հրապարակագիր տեղեակ կամ ոչ՝ գրեց և երկար. բայց աւելցնենք նաեւ՝ թէ ի զուր։

Ինչ որ իրական է և օրուան կացութիւն՝ գաղութներու տխուր պատկերն է, մանաւանդ որ հետզհետէ ռամկավարութիւն մը կ'աճի եկեղեցական խնդիրներու մէջ, և կրօնքը զուտ մարդկային ընկերական ազդակ մը կը դառնայ առանց ո՛ և է գերբնական նշմարի, առանց Աւետարանի հոգւոյն։

Ըստ այսմ ի զուր են հրապարակագրութեան ճիգերը, տեղի և անտեղի պահանջները. «Ծառն՝ արմատով է ծառ — Տունն՝ հիմամբ է տուն»․ և այդ արմատը կրօնական խոր ոգին ու հաւատքն է, և գիտենք թէ ո՛ւր են ակերը հայ ժողովուրդի խղճմտանքն ու մաքուր հաւատքին, այսինքն Լուսաւորչի և Ներսէսներու դաւանութիւնն և քրիստոնէական գործնական կեանքը, այդ կերպով մեր հայ ժողովուրդը պիտի ապահովէ իր հոգեւոր սնունդը, անոր միջոցով պիտի սորվի յարգել եկեղեցական աստուածային հաստատութիւնն և անոր նուիրեալ և Աստուծմէ կոչուած ու ձեռնադրուած ուղիղ հաւատքի վարդապետներն և Ս. Խորհրդոց և Շնորհաց մատակարարները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

---

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆ

Տարւոյս Դեկտեմբեր 26ին Մխիթարեան Ուխտս հանդիսաւորապէս կը տօնախմբէ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

### Վ. Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆԻ

*Թագադիր Աբբայ*

*Նախկին Ընդհանուր Աթոռակալ և Նախագահ Ուխտիս Վարչ. Մարմնոյն*

իբրեւ յարգանքի ցոյց իր բազմաշխատ գործունէութեան եւ հանդիսաւոր գնահատում իր յիսնամեայ գրական եւ դաստիարակչական բեղուն գործունէութեան։

---

# ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի

## 1932


էջ

**ԼԵԶՈՒ** (*հայկ.*) . . . 354

*Ղազիկեան Հ. Արսէն.* – Հայերէն լեզու. (Բանախօսութիւն ի Միլան, 1931 Ապրիլ)

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ** (*հին*) . . . 5, 148, 255

*Թորոսեան Հ. Յ.* – Քանի մը խնդրական կէտեր Կորեան գրքին մէջ . . . 343, 517

» Հ. Արսէն Սուքրի (Կեանքն ու գործը) . 282, 390, 436

» Ս. Սահակայ ... մատենագրութեան մէջ . . . 

*Ծանոյլի Ալմոյ.* – Ղեւտական Գրոց յունական մեկնութիւն մը հայ մատենագրութեան մէջ . . . 12

*Սարգսեան Հ. Գ.* – Տեսիլ Ս. Սահակայ (Ուսումն. և բնագիր) . Գ. տպ. առթիւ. 163

» Առ քննադէրս. «Պատմ. Հայկ. Հին Դպր. Հ. Գ. Զարբհանալեանի» . . . 444

» Փարպեցւոյն յառաջաբանն յղկուած . . . 127

*Փէչիկեան Հ. Ն.* – Յաշուիշատ (ուղիղ ձեւ է) ընդդէմ «Le Foyer»ի խմբ. . . . 336

» Ջուղայեցի Անտոն Դպրի պատմական յիշատակարան մը

**ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ** (*Միջնադարեան*) ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆ ՔՆԱՐ . . . 99

*Հր. Փէչիկեան Հ. Ն.* – Տաղ Խաչելութեան՝ ի Յարութիւն վարդապետէ . . . 100

» » Տաղ Յարութեան (Խոսրովային) . . . 216

» » Տաղ Աստուածածնի (Այբուբենական կարգով) . . . 216

» » Տաղ Աստուածածնի՝ ի Գրիգորիսէ Աղթամարցւոյ . . . 264

» » Տաղ Յարութեան՝ Ս. Ներսէսի Շնորհալւոյ . . . 265

» » Տաղ Համբարձման՝ Ս. Գրիգորի Նարեկացւոյ . . . 265

» » Տաղ ի Հոգին Սուրբ՝ յԱնդրէասէ . . . 435

» » (Տաղ) Ի Ս. վկայուհին խանում Թովրաք քալէցի՝ Նահապետ Շահէրի . . . 278

» » Անտիպ տաղեր և փոփոխակներ՝ Յովհաննէս Թլկուրանցւոյ . . . 464

*Հր. Քիւրտեան Յ.* – Բուչակեան նոր տաղաշարք մը

» »

**ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ** — *Ազգային նոր քնար* (*Ոտ.*)

*Յովհաննէսեան Հ. Վահան.* – Մայր իմ. 32, — Հայկական ձեռագիր. 133, — Վանքի ծաղիկը. 167, — Հայ բանաստեղծը. 220, — Ծովահարսը (Յայգանուագ Saluteի). 304, — Ագռաւ. 461, . . . —

*Արամայիս Սրապեան* – Տիեզերական տագնապ — Քաղցր մենութիւն — Գաղտնիք. 134, — Մխիթար Աբբահօր. 147, — Ս. Ղազար — Գերեզմաննոցն ի Ս. Ղազար. 222, — Վանականներ — Իրիկունն ի Ս. Ղազար. 223, — Լորտ Պայրըն ի Ս. Ղազար. 272, . . .

*Քաջարենց Հ.* – Յոյս և սէր. 31, — Աղօթք՝ Անոր որ Աստուած մը ծնաւ. 71, — Սրտիս հետ. 132, — Մուրացիկները. 220, — Ուշացի՛ր որդին. 548, . . .

*Թոմաճեան Հ. Թ.* – Դաստարանի խօսուն զանգակը — Ուսումնատենչը. 73, — Գեղեցիկ՝ բայց չար — Տգեղ՝ բայց անմեղ. 312, — Առ ողբ. Հ. Արսէն Ղազիկեան. 368,

*Փէչիկեան Հ. Ն.* – Աղօթեցէ՛ք, ծաղիկներ. 168, — Ս. Նշան. 462, — Ծննդեան գիշեր. 562, —

*Սօֆեան Վ.* – Խորհէ՛. 133, — Թոյլ ու թեթեւ — Կեանքի ճանապարհին. 305, — Մետասա — Սփոփանք. 547, . . .


digitised by A.R.A.R.@